# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## 25 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 101-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է.*

1. Ապարան համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 25-ի առաջին նստաշրջանի հինգերորդ նիստի օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Կ. Եղիազարյան)

2. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

3. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Կայք բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունները և հողատեսքերը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

4. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքներում գտնվող՝ քաղաքացի Վահե Մխիթարյանի սեփականությունը հանդիսացող հողամասից 0.2 հա հողամասի նպատակային նշանակությունը եվ հողատեսքը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

5. Ապարանի քաղաքապետարանի և Գայ Բարսեղյանի միջև 06.10.2004թ հողամասի վարձակալության թիվ 1167 պայմանագրում փոփոխություն կատարաելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

6. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի վարչական տարածքում գտնվող 02-002-0036-0045 կադաստրային ծածկագրով 0,80041 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից 0,16 հա հողամասը մասնակիորեն դադարեցնելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

7. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող, Լուսագյուղի վարչական տարածքում գտնվող, Վարդան Խաչիկի Գալստյանի կողմից վարձակալված հողամասը օտարելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

8. Ապարան համայնքի Վարդենուտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամաերը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ հիմնարկ) համար «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ԻՑ (այսուհետ՝ լիզինգատու) լիզինգի միջոցով անհրաժեշտ գույք, կարուսելներ և մարզասարքեր ձեռք բերելու մասին

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

10.«Հայաստանում անտառների վերականգնում և կլիմայի փոփոխություն» (FORACCA) ծրագրին հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

11.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին

(զեկուցող՝ Ի. Թադևոսյան)

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ – 14), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Երեմյան Աղվան
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Կարապետյան Կարեն
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Սարգսյան Արշակ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

## 25 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 102-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԻՄՆԱՐԿ) ՀԱՄԱՐ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԼԻԶԻՆԳԱՏՈՒ) ԼԻԶԻՆԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՅՔ, ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱՍԱՐՔԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 25-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, Ապարան համայնքի աշխատանքները պատշաճ, արդյունավետ իրականացնելու և զբոսայգիների կահավորումն ապահովելու նպատակով՝ խիստ անհրաժեշտություն է առաջացել լիզինգի միջոցով ձեռք բերել անհրաժեշտ գույք, մանկական խաղահրապարակներ և մարզասարքեր:

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1.Լիզինգատուի հետ, Լիզինգատուի կողմից առաջարկվող/Լիզինգատուի իրավասու մարմնի կողմից որոշված պայմաններով (այդ թվում նաև՝ տոկոսադրույք, Լիզինգային վճարի նախավճար, տուժանք և այլն) Գույքը սեփականության իրավունքով ձեռք բերելու պայմանով, տոկոսադրույքով կնքել 776,146,200 (յոթհարյուր յոթանասունվեց միլիոն, հարյուր քառասունցեվ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ընդ որում՝ գումարի չափի ավելացման հնարավորությամբ պայմանավորված, այդ թվում նաև՝ լիզինգի առարկաների ձեռքբերման հետ կապված ծախսերի /ներառյալ՝ ձեռքբերման պայմանագրով նախատեսված ինդեքսավորման, ներմուծման, փոխադրման ու մատակարարման ծախսերի և/կամ փոխարժեքի տատանմամբ և/կամ արժութային փոխարկմամբ, մինչև 60 ամիս ժամկետով (ժամկետի հաշվարկը սկսվում է Լիզինգի պայմանագրի շրջանակում հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից) լիզինգի պայմանագիր (որոշման մեջ հիշատակվելու դեպքում, այսուհետ նաև՝ Լիզինգի պայմանագիր)՝ ապահովելով տոկոսադրույքի, լիզինգային վճարների, նախավճարի և Լիզինգի պայմանագրով (ներառյալ՝ հավելվածներով, հանձման-ընդունման ակտով) նախատեսվելիք այլ վճարումների պատշաճ կատարումը, որի շրջանակներում Հիմնարկի կողմից մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված ընկերությունից Լիզինգատուն ձեռք է բերելու 776,146,200 (յոթհարյուր յոթանասունվեց միլիոն, հարյուր քառասունցեվ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ արժեքով:

2.Կնքել/ստորագրել Լիզինգի պայմանագրի հավելվածները և (կամ) լիզինգի պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելու համաձայնագրերը և ստորագրել վերջինիս կնքման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Համաձայնություն տալ լիզինգի գումարի փոփոխմանը լիզինգի գումարի մեջ ներառվող վճարների և ծախսերի չափի փոփոխությամբ, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված, փոփոխված չափին համապատասխան:

3.Երաշխավորել Ապարանի համայնքապետարանի կողմից Գույքի ձեռքբերման և պատասխանատվություն ստանձնել Լիզինգի պայմանագրի բոլոր կետերը ժամանակին կատարելու համար:

4.Հանձնարարել Հիմնարկի ղեկավար Կարեն Մերուժանի Եղիազարյանին հանդես գալ Հիմնարկի անունից Լիզինգատուի մոտ, ստորագրել/կնքել վերը նշված բոլոր պայմանագրերը նշված պայմաններով, ինչպես նաև Լիզինգատուի կողմից առաջարկած/առաջարկվող այլ պայմաններով ու տեքստով ըստ իր հայեցողության, Հիմնարկի անունից կատարել ցանկացած գործողություն, որն անհրաժեշտ կլինի սույն որոշմամբ ամրագրված գործարքի իրականացման համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պետական լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու հետո:

| Ավագանի՝ | (Կողմ – 12), | (Դեմ-0), | (Ձեռնպահ-0), | (Չի քվեարկել-1) |
|---|---|---|---|---|
| | Կարապետյան Արկադի<br>Երեմյան Աղվան<br>Պետրոսյան Գոռ<br>Ենոքյան Դավիթ<br>Խալաթյան Արթուր<br>Ավդալյան Արարատ<br>Կարապետյան Կարեն<br>Մանուկյան Աղաբեկ<br>Սահակյան Հովհաննես<br>Գեղամյան Խաչիկ<br>Սարգսյան Արշակ<br>Կոստանյան Ժորա | | | Եղիազարյան Կարեն |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 25 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 103-Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» (FORACCA) ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1.Հավանություն տալ՝ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ Ապարան համայնքի Թթուջուր բնակավայրի վարչական տարածքում՝ «Հայաստանում անտառների վերականգնում և կլիմայի փոփոխություն» ծրագրի շրջանակներում համայնքային ագրոանտառի տնկման ծրագրին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

| Ավագանի՝ | (Կողմ – 12), | (Դեմ-0), | (Ձեռնպահ-0), | (Չի քվեարկել-1) |
|---|---|---|---|---|
| | Կարապետյան Արկադի<br>Երեմյան Աղվան<br>Պետրոսյան Գոռ<br>Ենոքյան Դավիթ<br>Խալաթյան Արթուր<br>Ավդալյան Արարատ<br>Կարապետյան Կարեն<br>Մանուկյան Աղաբեկ<br>Սահակյան Հովհաննես<br>Գեղամյան Խաչիկ<br>Սարգսյան Արշակ<br>Կոստանյան Ժորա | | | Եղիազարյան Կարեն |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 25 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 104-Ա

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի և Ապարան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին Ապարան համայնքի ավագանու 16.02.2023թ. N 19-Ա որոշման պահանջներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող՝ 10 միավոր, ընդհանուրը 1.0304 հա հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելուն՝ համաձայն աղյուսակի:
2.Ընդունել ի գիտություն, որ հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխվում են գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու, հետագայում դրանք օտարելու և (կամ) փոխանակելու նպատակով:
3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ – 13), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Երեմյան Աղվան
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Կարապետյան Կարեն
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Սարգսյան Արշակ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Առյուսակ

Ապարան համայնքի ավագանու
25.06.2025թ. թիվ 104-Ա որոշմամբ

| h/h | Գտնվելու վայրը, Ծածկագիրը, | Մակերես ը/հա | առկա գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | գործառնական նշանակությունը ըստ բնակավայրի գոտեվորման հատակագծի | Փոփոխվող գործառնական նշանակությունը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գ.Երնջատափ 0042-0004-hg | 0,01465 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրի բնակելի կառուցապատման | Օտարելու նպատակով |
| 2 | Գ. Հարթավան 0405-0003-hg | 0.26458 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրի բնակելի կառուցապատման | Օտարելու նպատակով |
| 3 | Գ. Ափնագյուղ 0015-0001-hg | 0.26254 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրի հասարակական կառուցապատման | Օտարելու նպատակով |
| 4 | Գ. Շողակն 0015-0001-hg | 0.26458 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրի բնակելի կառուցապատման | Օտարելու նպատակով |
| 6 | Գ.Շենավան 0009-0001-hg | 0.2 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրի բնակելի կառուցապատման | Օտարելու նպատակով |
| 7 | Գ.Եղիպատրուշ 0036-0001-hg | 0.00664 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրի բնակելի կառուցապատման | Օտարելու նպատակով |
| 8 | Ք.Ապարան 0082-0003-hg | 0.003 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրի հասարակական կառուցապատման | Օտարելու նպատակով |
| 9 | Ք.Ապարան 0138-0022-hg | 0.01441 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրի բնակելի կառուցապատման | Օտարելու նպատակով |
| 10 | Գ. Շենավան 0241-0001-hg | 0,15883 | Բնակավայրերի ընդհանուր օգտագործման | Բնակավայրերի այլ | Բնակելի կառուցապատման | Օտարելու նպատակով |

Աշխատակազմի քարտուղար Ի.Թադևոսյան

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ *05028552*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 25 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 105-Ա

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերով, և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Կայք բնակավայրերի վարչական սահմանում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունները և հողատեսքերը փոփոխել և դարձնել՝ բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման և ընհանոր օգտագործման գործառնական նշանակության, համաձայն աղյուսակի:
2. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
3.Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2025թ հողային հաշվեկշկում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ – 13), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Երեմյան Աղվան
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Կարապետյան Կարեն
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Սարգսյան Արշակ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Աղյուսակ

Ապարան համայնքի ավագանու
25.06.2025թ. թիվ 105-Ա որոշմամբ

| NN | Ծածկագիրը և սեփականատերը | Բնակավայրի անվանումը | Մակերես /հա/ | Փոփոխվող հողամասի նպատակային և գործառնական նշանակություն | Փոփոխված հողամասի նպատակային և գործառնական նշանակություն | Դրական եզրակացության ամիս,ամսաթիվ, համարը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գ.Կայք, համայնքային | 02-072-0021-0003 | 0.06461 | Բնակավայրերի բնակելի կուցապատման | Բնակավայրերի հասարական կառուղապատման | 03.06.2025թ. N2/փ-156 |
| 2 | Գ. Կայք, համայնքային | 02-072-0021-0005 | 0.09831 | Բնակավայրերի բնակելի կուցապատման | Բնակավայրերի հասարական կառուղապատման | 03.06.2025թ. N2/փ-156 |
| 3 | Գ. Կայք, համայնքային | 02-072-0021-0004 | 0.33258 | Գյուղատնտեսական այլ հողատեսք | Բնակավայրերի հասարական կառուղապատման | 03.06.2025թ. N2/փ-156 |
| 4 | Գ. Կայք, համայնքային | 02-072-0021-0006 | 0.02444 | Գյուղատնտեսական այլ հողատեսք | Բնակավայրերի հասարական կառուղապատման | 03.06.2025թ. N2/փ-156 |
| 5 | Գ. Կայք, համայնքային | 02-072-0407-0001 | 0.0071 | Գյուղատնտեսական այլ հողատեսք | Բնակավայրերի հասարական կառուղապատման | 03.06.2025թ. N2/փ-156 |
| 6 | Գ. Կայք, համայնքային | 02-072-0021-0003 | 0.04035 | Բնակավայրերի բնակելի կուցապատման | Բնակավայրերի ընդհանուր օգտագործման | 03.06.2025թ. N2/փ-156 |
| 7 | Գ. Կայք, համայնքային | 02-072-0021-0004 | 0.06391 | Գյուղատնտեսական այլ հողատեսք | Բնակավայրերի ընդհանուր օգտագործման | 03.06.2025թ. N2/փ-156 |

Աշխատակազմի քարտուղար՝ Ի.Թադևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 25 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 106-Ա

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՀԵ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.2 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով, և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Վահե Աշոտի Մխիթարյանի 01.03.2024թ. N 1204 դիմումի վերաբերյալ համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացի Վահե Աշոտի Մխիթարյանի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.2 հա հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխել և դարձնել՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության, համաձայն աղյուսակի:
2.Ընդունել ի գիտություն որ փոփոխվող հողամասի վրա կառուցվելու է բնակելի տուն, ավտոտնակ և ջրավազան:
3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
4.Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2025թ հողային հաշվեկշռում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Աղյուսակ

| N | Գտնվելու վարը. սեփականատերը | Ծածկագիրը | Մակերես /հա/ | Փոփոխվող հողամասի նպատակային և գործառնական նշանակություն | Փոփոխված հողամասի նպատակային և գործառնական նշանակություն | Դրական եզրակացության ամիս, ամսաթիվ, համարը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գ. Եղիպատրուշ Վահե Աշոտի Մխիթարյան | 02-040-0119-0009 | 0.2 | Գյուղատնտեսական վարելահող | Բնակավայրերի բնակելի կառուցապատման | 13.05.2025թ. N2/փ-149 |

Ավագանի՝ (Կողմ – 13), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Երեմյան Աղվան
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Կարապետյան Կարեն
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Սարգսյան Արշակ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
### 25 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 107-Ա

**ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԳԱՅ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՄԻՋԵՎ 06.10.2004Թ ԿՆՔՎԱԾ՝ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹԻՎ 1167 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին կետի և 468-րդ հոդվածի 1-ին կետի,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Ապարանի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ապարանի համայնքի ավագանին որոշում է ՝

1.Թույլատրել Ապարան համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող՝ քաղ. Գայ Բարսեղյանի և Ապարանի քաղաքապետարանի միջև կնքված՝ 06.10.2004թ. թիվ 1167 հողամասի վարձակալության պսյմանագրի ,,պայմանագրի առարկա,, բաժնի 1.2 կետում՝ ,,բնակավայրի հող,, գրառումը փոխել՝ ,,բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարարական կառուցապատման,, գրառմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ – 13), (Դեմ-0), (Ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Երեմյան Աղվան
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Կարապետյան Կարեն
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Սարգսյան Արշակ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## 25 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 108-Ա

### ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԳԱԾ ԵՎ ՎԱՐԴԵՆՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ ՀՀ կառավարության 02.03.2023 թ N 279-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ «Արագած» ներդրումային ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 04.09.2023թ N1595-Ն որոշմամբ Վարդենուտ և Արագած բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող մի շարք հողամասեր ճանաչվել են հանրային գերակա շահ, ուստի՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, <<Գերակա շահի մասին>> ՀՀ օրենքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Ապարան համայնքի Վարդենուտ և Արագած բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, ՀՀ կառավարության 02.03.2023 թ N 279-Ն որոշմամբ տրված համաձայնության համաձայն՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը, ուղղակի վաճառքով օտարել «ՌԻԴ» ՍՊԸ-ին:
2.Հաստատել հողատարածքների օտարման արժեքները՝ տվյալ պահին գործող տվյալ նպատակային և գործառնական նշանակության հողամասերի կադաստրային արժեքով:
3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ – 13), (Դեմ-0), (Ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Երեմյան Աղվան
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Կարապետյան Կարեն
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Սարգսյան Արշակ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 109-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստ գումարելու հանգամանքը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 11-ին, ժամը 09:00:

2. Նիստը կազմակերպել՝ Ապարանի համայնքապետարանի վարչական շենքում, Բաղրամյան 26՝ նիստերի դահլիճում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ – 13), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Երեմյան Աղվան
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Կարապետյան Կարեն
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Սարգսյան Արշակ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ